ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան Մելիք Ադամյան 1 հասցեում, ստորև ներկայացնում է ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/8 ծածկագրով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի արդյունքում 2015թ-ի հուլիսի 10-ին կնքված պայմանագրում 2015թ-ի հոկտեմբերի 8-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: 1. Ծառայությունների մատուցման գործընթացը սկսելու նպատակով նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

2. Անհրաժեշտություն է առաջացել պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն պայմանագրի գինը ավելացնելով 2680000 ՀՀ դրամով:

3. Անհրաժեշտություն է առաջացել պայմանագրում կատարել փոփոխություն հիմք ընդունելով ծրագրեր իրականացնող կազմակերպություններին և ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ) ավելացված արժեքի հարկից ազատվելու մասին 1992 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու մասին» համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր վճարների արտոնություններից օգտվելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետի ա) ենթակետը:

4. ՀՀ ֆինանսների նախարարությունը ծառայությունների մատուցման համար նախատեսում է կանխավճար պայմանագրի գնի 100%-ի չափով, բանկային երաշխիք ներկայացվելու պայմանով:

Փոփոխության նկարագրություն: 1. Կողմերը համաձայնագրով հաստատել են ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը:

2. Հաստատվել է պայմանագրի նոր խմբագրված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը:

3. Պայմանագրի 4.1 կետը սահմանվել է նոր հետևյալ խմբագրությամբ:

«Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 98880000 (ինսունութ միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը չի ներառում ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը՝ բացառությամբ ԱԱՀ-ն, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:»

4. Սահմանվել է Պայմանագրի 100%-ի չափով կանխավճար բանկային երաշխիք ներկայացվելու պայմանով:

Փոփոխության հիմնավորում: Փոփոխությունը կատարվում է. ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգով սահմանված պայմաններին համապատասխան՝ Պայմանագրի 7.1 և 7.3 կետի և ծրագրեր իրականացնող կազմակերպություններին և ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ) ավելացված արժեքի հարկից ազատվելու մասին 1992 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու մասին» համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր վճարների արտոնություններից օգտվելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետի ա) ենթակետ համաձայն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ. Ջանջուղազյանին:

Հեռախոս՝ 094 49 13 38:
Էլ.փոստ՝ info@interlimens.com:
Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2015թ. հուլիսի 10-ին կնքված N ՖՆ-ԲՀՇՁԲ-15/8 պայմանագրի

ք. Երևան "...8..." հոկտեմբերի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Արզումանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության լիազորված անձ Էրիկ Հայրապետյանի անձն. 711343606, տրվ. 15.07.2010թ. ԴՄՇ 77610-ի կողմից, որը գործում է 31.07.2013թ. տրված լիազորագրի հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով նաև «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ի և «Էրնսթ ընդ Յանգ Բալտիք» Յու-Էյ-Բի-ի միջև 29.05.2015թ. կնքված համագործակցության պայմանագիրը և Կողմերի միջև 10/07/2015թ. կնքված N ՖՆ-ԲՀՇՁԲ-15/8 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.1 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի հավելված N 1-ը՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը սահմանել նոր խմբագրությամբ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2 Պայմանագրի 4.1 կետը սահմանել նոր հետևյալ խմբագրությամբ.

«Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 98880000 (ինսունութ միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը չի ներառում ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը՝ բացառությամբ ԱԱՀ-ն, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:»

1.3 հաստատել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի:

1.4 սահմանել, որ Պայմանագրի գինը՝ 98880000 (ինսունութ միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար բանկային երաշխիք ներկայացվելու պայմանով: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	ք. Երևան, Հյուսիսային պող. 1, գր.27,
ք.Երևան, Մ. Ադամյան 1	հեռ. 010 500 790, 010 500 706,
ՀՀ ֆինաշիատակազմի գործառնական	yerevan@am.ey.com
վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի [illegible]» ՓԲԸ
/հաշիվ 02629081	[illegible]
2/2 90001301[illegible]7075	[illegible]
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
"10" հուլիսի 2015թ. կնքված
N ՖՆ-ԲՀՀՇՁԲ-15/8 պայմանագրի հիման վրա
"....8....."հոկտեմբերի 2015թ. կնքված համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության անվանումը	Ձեռքբերվող Ծառայության Նկարագիրը, /հատկանիշները/
Մարդկային ռեսուրսների կառավարման խորհրդատվական ծառայություններ	1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՀՀ ֆինանսների նախարարությունը (ՀՀ ՖՆ) հանդիսանում է հանրապետական գործադիր մարմին, որը կարգավորում է պետական ֆինանսական հարաբերությունները: ՀՀ ՖՆ կառուցվածքային և գործառութային զարգացումները նպաստել են մարմնի կայացմանը՝ որպես երկրի սոցիալ-տնտեսական զարգացման շարժիչ ուժ: ՀՀ ՖՆ-ն նշանակալից դեր է խաղում կառավարության կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ տնտեսական, սոցիալական և քաղաքական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ միջոցների հավաքագրման, ինչպես նաև այդ միջոցները ՀՀ կառավարության տարբեր մարմինների կողմից ծախսման պատշաճ ուղղորդման գործընթացում՝ լավ կազմակերպված և կառավարվող բյուջետային տեղաբաշխման և ծախսման համակարգի միջոցով: Իր նպատակներն իրականացնելու համար ՀՀ ՖՆ-ն պետք է արդիականացնի և ընդլայնի ինստիտուցիոնալ և անձնակազմի կարողությունները՝ վերապատրաստումների, կառուցվածքային օպտիմալացման, ինչպես նաև առկա հմտությունների և կարողությունների արդյունավետ օգտագործման միջոցով: ՀՀ ՖՆ-ն կարիք ունի վերանայելու իր կազմակերպական և մարդկային ռեսուրսների համակարգերը՝ արտադրողականության, կատարողականի բացերը լրացնելու համար: ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (ՄԶԳ) և ՀՀ ՖՆ-ն 2013թ. ստորագրել են Ուղղակի դրամաշնորհի համաձայնագիր (LSGA 111-13-0001), որի նպատակն է բարելավել ՀՀ ՖՆ-ի մարդկային ռեսուրսների (ՄՌ) և ինստիտուցիոնալ կարողությունները: Առավել հստակ՝ նախատեսվում է, որ այս դրամաշնորհի միջոցով ՖՆ-ն կբարելավվի մարդկային ռեսուրսների կառավարման իր գործառույթը և աշխատուժի զարգացման աշխատանքները: ՖՆ-ի կատարողականի առկա բացերը հասցեագրելու նպատակով՝ դրամաշնորհային ծրագիրը կբարելավի ՖՆ-ի ինստիտուցիոնալ կարողությունը՝ կատարելով մարդկային ռեսուրսների և կազմակերպական գործելակերպերի խորը ուսումնասիրություն և կմշակի գործողությունների ծրագիր, որը կանդրադառնա կատարողականի բացերին և խոչընդոտներին: Աշխատանքը հիմնականում ուղղված կլինի ՖՆ-ի ՄՌ ռազմավարությանը, պլանավորմանը, կառավարման կազմակերպմանը, աշխատակիցների գնահատմանն ու զարգացման համակարգերին և վերապատրաստման բարելավված կարողությանը: Սույն Առաջադրանքով նախատեսվող խորհրդատվական ծառայության շնորհիվ ՀՀ ՖՆ-ը նախատեսում է իրագործել վերոնշյալ Ուղղակի դրամաշնորհի ծրագրի նպատակները՝ էապես բարելավելով իր կազմակերպական կարողությունները և ՄՌ կառավարման պրակտիկան: 2. ՆՊԱՏԱԿՆԵՐ Առաջադրանքի շրջանակներում նախատեսված են հետևյալ նպատակների իրագործումը՝ Ա) Բարելավել ՖՆ կազմակերպական կարողությունները՝ ուղղված ՖՆ ռազմավարական նպատակների ձեռքբերմանը և կազմակերպական ու անհատական աշխատանքային կատարողականության բարելավմանը: Բ) Հզորացնել ՖՆ մարդկային ռեսուրսների կառավարման, որպես ֆունկցիոնալ ոլորտի, կազմակերպական ու մարդկային կարողությունները՝ իրականացնելու ՖՆ ներկայիս մարտահրավերներին ու ռազմավարական խնդիրներին ավելի համարժեք մարդկային ռեսուրսների կառավարման միջոցառումներ և աշխատանքներ:

	Վերոնշյալ նպատակների ձեռքբերման համար սույն Առաջադրանքով նախատեսվում է, նախնառաջ, իրականացնելու ՖՆ մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունների գնահատում, բացերի ու խոչընդոտների վերհանում, ինչպես նաև բարելավման համապատասխան ծրագրի մշակում: Այնուհետև, Առաջադրանքի շրջանակներում դիտարկվում են ՄՌ կառավարման և զարգացմանն առնչվող առանձին հիմնախնդիրներ ու միջոցառումներ, որոնց իրականացումը նս կապահովի նախանշված նպատակների իրացումը: Այսպիսով, Առաջադրանքն իրականացվելու է ըստ հետևյալ, միմյանց հետ փոխկապակցված երեք բաղադրիչների՝ 1. Մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման (ՄԻԿԶ) գնահատում 2. *Մարդկային ռեսուրսների կառավարում* 3. Մարդկային ռեսուրսների զարգացում: Առաջադրանքի շրջանակում նախատեսվող ողջ ՄԻԿԶ գնահատման և մարդկային ռեսուրսի կառավարման բարելավման աշխատանքների ելակետում ընկած է ՀՀ ՖՆ-ի ռազմավարական նպատակների և ՀՀ կառավարության՝ իր մասով գերակա ուղղությունների ու առաջնահերթությունների իրագործման ինստիտուցիոնալ կարողությունն ու փոփոխություններին արձագանքելու, բարեփոխումներ իրականացնելու կազմակերպական ու մարդկային ռեսուրսի կարողության ստեղծումը՝ միջնաժամկետ հատվածում: * Կից ներկայացվում է ծառայությունների մատուցման տեխնիկական առաջադրանքը
Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 180 օրացուցային օրվա ընթացքում, ընդ որում՝ Փուլ 1.համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 60-րդ օրացուցային օրը. 1) ՄԻԿԶ գնահատման մեթոդաբանության վերջնական տարբերակ 2) ՄԻԿԶ թեմայով վերապատրաստումներ, օտարերկրյա համաժողովներին մասնակցության ապահովում 3) ՄԻԿԶ գնահատման հաշվետվություն 4) ՖՆ կատարողականի բարելավման և անձնակազմի կարողությունների զարգացման 2015-2017թթ. Ծրագիր 5) ՖՆ աշխատանքային ռեսուրսների պլանավորման և հավաքագրման (որպես ՄՌԿ գործառույթ) հայեցակարգ 6) ՖՆ աշխատանքային կատարողականի կառավարման (որպես ՄՌԿ գործառույթ) հայեցակարգ 7) Առաջարկություններ ԱԿՎ նոր դերի վերաբերյալ (առաքելություն և տեսլական) Փուլ 2.համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 120-րդ օրացուցային օրը . 8) ՖՆ ուսուցման և զարգացման (որպես ՄՌԿ գործառույթ) հայեցակարգ 9) ՖՆ աշխատողների խրախուսման (որպես ՄՌԿ գործառույթ) հայեցակարգ 10) ՖՆ աշխատանքային ռեսուրսների պլանավորման և հավաքագրման, կատարողականի կառավարման, ուսուցման և զարգացման, ինչպես նաև աշխատողների խրախուսման թեմաներով վերապատրաստումներ 11) Առաջարկություններ ԱԿՎ գործառութային և կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ, ներառյալ ԱԿՎ կառուցվածքային և գործառութային բարեփոխումների պլանը և ժամանակացույցը 12) ԱԿՎ պաշտոնների նկարագրերի փոփոխություններ՝ պայմանավորված ՖՆ կողմից հաստատված ԱԿՎ կառուցվածքային և գործառութային բարեփոխումներով Փուլ 3.համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 180-րդ օրացուցային օրը .

	13) ՖՆ կոմպետենտությունների սահմանման մեթոդաբանություն 14) Ըստ կոմպետենտությունների ուսումնական կարիքների գնահատման և ուսուցման պլանի կազմման մեթոդաբանություն 15) Ըստ կոմպետենտությունների ՄՌ կառավարման, կոմպետենտությունների սահմանման, ըստ կոմպետենտությունների ուսումնական կարիքների գնահատման, ինչպես նաև ուսուցման պլանի կազմման մեթոդաբանության թեմաներով վերապատրաստումներ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք.Երևան, Մ. Աղամյան 1
ՀՀ ՖՆաշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900013017076

(անդրադարձություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
ք. Երևան, Հյուսիսային պող. 1, գր.27,
հեռ. 010 500 790, 010 500 706,
yerevan@am.ey.com
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
ՀՎՀՀ 00057741
Հ/Հ 001[illegible]-001

(վերադարձություն)

Կ.Տ.

Հավելված 2
"10" հուլիսի 2015թ. կնքված
N ՖՆ-ԲՀՀԾՁԲ-15/8 պայմանագրի հիման վրա
"....8...."հոկտեմբերի 2015թ. կնքված համաձայնագրի

ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՖՆ 2015թ. միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում			
	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
Մարդկային ռեսուրսների կառավարման խորհրդատվական ծառայություններ	98880000	98880000	98880000	98880000

** Գումարները ներկայացված են ամբողջական:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք.Երևան, Մ. Մադամյան 1
ՀՀ ՖՆաշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900013017075

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
ք. Երևան, Հյուսիսային պող. 1, գր.27,
հեռ. 010 500 790, 010 500 706,
yerevan@am.ey.com
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
ՀՎՀՀ 00057741
Հ/Հ 001-1[illegible]001

(ստորագրություն)

«ԷՅՉ ԷՍ ԲԻ ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԱԿ
«ERNST & YOUNG»
00057741